ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«08» սեպտեմբեր 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի պետ

_____ Մ. Անանյան

ԳԲԽ-91/16 բողոքը քննող

հանձնաժողովին

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի (այսուհետ՝ նաև Կենտրոն) կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով, ինչպես նաև ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 24.08.2016թ. ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ներկայացրած բողոքը՝ պարզել ենք հետևյալը.

1.«Բարվա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Բարվա» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 24.08.2016թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

I. Բողոքի նախապատմությունը և փաստերը.

ՀՀ Արարատի մարզպետարանն (այսուհետ նաև՝ Պատվիրատու) իր կարիքների համար 05.08.2016 թվականին հայտարարել է հրավեր (այսուհետ նաև՝ Հրավեր)

(ծածկագիրը՝ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» այսուհետ նաև՝ Ընթացակարգ) «Հակակարկտային կայանների ձեռքբերում տեղակայումով» նպատակով (արտակարգ կամ անկանխատեսելի իրավիճակի առաջացման հիմով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ): Հայտերի բացման օր է սահմանվել 16.08.2016 թվականը:

Ընթացակարգին հայտեր են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. որոշմամբ Ընթացակարգի հաղթող է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն՝ որպես նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

II. Բողոքի իրավական հիմքերը և հիմնավորումները

Բողոք բերող ընկերությունը գտնում է, որ բողոքն ենթակա է բավարարման հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն.

2. Սույն հոդվածի 1-ին մասով նախատեսված նպատակի իրագործման համար գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) գնման գործընթացի միասնական կանոններով, մրցակցային, թափանցիկ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները).

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և, հրավերով սահմանված դեպքերում ու կարգով, գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Վերլուծելով վերոգրյալ նորմերը և փաստերը՝ Ընկերությունը գտնում է, որ Պատվիրատուն հայտարարելով Ընթացակարգ և բացելով հայտերը, ընտրել է գնային առաջարկով 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի, այնուհետև Օրենքի խախտմամբ գնահատել է ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին և պատշաճ գնահատման չի արժանացրել ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը, քանի որ «Լոկատոր» ՓԲԸ-ն չի ներկայացրել անհրաժեշտ և հրավերով պահանջված փաստաթղթերը: Ընդամենը, առանց ուսումնասիրության ընդունելով ներկայացված փաստաթղթերի համապատասխանությունը, «Լոկատոր» ՓԲԸ-ին ճանաչել է հաղթող և «Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 2-րդ, 31-րդ հոդվածի 5-րդ, 6-րդ, մասերի խախտմամբ մերժել է Ընկերության հայտը:

Ընկերությունը նշել է, որ «Բարվա» ՍՊԸ-ն բավականին հաճախ է ՀՀ տարածքում մասնակցում պետական գնումների գործընթացներին: Վերջին մեկ տարվա ընթացքում շուկայում հայտնվել է մեկ այլ ընկերություն («Լոկատոր» ՓԲԸ), որը նույնպես առաջարկում է հակակարտային կայաններ: Ինչ խոսք, շուկայական հարաբերություններում շատ նորմալ է և նույնիսկ խիստ կարևոր առողջ մրցակցությունը, իսկ տվյալ դեպքում այն կարող է բխել միայն պատվիրատուների շահերից: Սակայն վերջին մեկ տարվա իրադարձությունների ընթացքը, մասնավորապես հենց նույն պատվիրատուին ներկայացված տեղեկությունները վերլուծելով, Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում գործ ունեն անբարեխիղճ մրցակցի հետ:

Ընկերությունը հայտնել է, որ Օրենքով հստակ սահմանվում է, որ գնման գործընթացի մասնակիցը պետք է ունենա որոշակի մասնագիտական փորձառություն, այն է՝ նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների՝ տվյալ դեպքում հակակարկտային կայանների վաճառքի պատշաճ իրականացված պայմանագրեր:

Այսպես, ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից 16.11.2015թ. հայտարարված «ՀՀԱՄ-ԲԸԱՀԱՊՁԲ-15/07» ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն համանման (նմանատիպ) պայմանագրի կատարման փորձառություն ունենալու մասին, որպես նմանատիպ նշվել է հակակարկտային կայանների մատակարարումով և տեղակայումով պայմանագիր: Նշված ընթացակարգում «Լոկատոր» ՓԲԸ-ն մասնակցել է «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի հետ կոնսորցիումով և որպես փորձառություն ներկայացրել է իր և «Էս Թի Սերվիս» ՍՊԸ-ի միջև 09.12.2014թ. կնքված թիվ Ա14-018/1 և 02.10.2015թ. իր և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև կնքված հակակարկտային կայանների առուվաճառքի թիվ Ա15-012 պայմանագրերը, որտեղ բացակայել է հակակարկտային կայանների տեղակայման վերաբերյալ որևէ հիշատակում, կամ «տեղակայում» բառն ինքնին: Այդ իսկ պատճառով գնահատող հանձնաժողովը մերժել է «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը, որից հետո 23.11.2015թ. «Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքարկել է հանձնաժողովի որոշումը Խորհրդին, պնդելով, որ հանձնաժողովը չպետք է պահանջեր տեղակայման վերաբերյալ որևէ փաստաթուղթ, և որ միայն կայանների մատակարարումը բավարար պետք է համարվեր կոնսորցիումի հայտը չմերժելու համար: Ինչևէ, այստեղ նույնպես բողոքը մերժվել է և առկա է համապատասխան թիվ 44/15 որոշումը (նշված ընթացակարգին վերաբերող բոլոր փաստաթղթերը, այդ թվում պայմանագրերը ներկայացվել են պատվիրատուի կողմից բողոքը քննող հանձնաժողովին), որտեղ հստակ շարադրված են վերը նշված փաստերը: Այսքանից հետո, ըստ Ընկերության, առնվազն տարակուսելի է, երբ այս տարի արդեն, նույն Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ընթացակարգի ժամանակ «Լոկատոր» ՓԲԸ-ն որակավորման փաստաթղթերի ներկայացման փուլում ներկայացրել է միևնույն 02.10.2015թ. ամսաթվով և համարով Ա15-012 պայմանագիրը, վերջինիս տեքստում ավելացված «տեղակայում» բառը մի քանի տեղով: Ավելին, պայմանագիրը, վերջինիս տեքստում ավելացված «տեղակայում» բառը մի քանի

տեղով: Ավելին, նույնիսկ ներկայացվել է 12.11.2015թ. կնքված հակակարկտային կայանների տեղակայման ակտ, վերը նշված պայմանագրի շրջանակներում: Ըստ Ընկերության՝ հարց է առաջանում, թե ինչու այդ ակտը չէր ներկայացվել թե Արարատի մարզպետարանի կողմից 16.11.2015թ. հայտարարված մրցույթի ժամանակ, թե առավել ևս դրան հետևած բողոքարկման ժամանակ: Ըստ Ընկերության՝ ունեցած տեղեկություններով, պայմանագրի կողմեր հանդիսացող ընկերությունները, ըստ էության, պատկանում են նույն անձանց, որը թույլ է տալիս նրանց ըստ ցանկության և հարմարության ձևաթոխել պայմանագրերի հետին ամսաթվերով, հարմարեցնելով դրանք տարբեր մրցույթային պահանջներին:

Ըստ Ընկերության՝ անհասկանալի է, թե անգամ նույնիսկ տեղակայման փաստի առկայության դեպքում պայմանագրի առարկա թվով 3 հակակարկտային կայանները, որոնք իրենցից ներկայացնում են բավական աղմկոտ և որոշակի շահագործման կանոններ պահանջող սարքավորումներ, և որոնցիցյուրաքանչյուրը պաշտպանում է կարկտից առնվազն 80հա կամ 500մ շառավղով տարածք (այսինքն՝ նրանք պետք է տեղակայվեն միմյանցից առնվազն 1 կմ հեռավորությամբ), մայրաքաղաքի վարչական տարածքում շինարարարկան գործունեություն ծավալող «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն որտեղ է տեղակայել և ինչ նպատակով: Հայտնի է, որ ելնելով «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներից, հակակարտային կայանները համարվում են արդյունաբերական (արտադրական) վտանգավոր օբյեկտներ, դրանց միասնական կառավարումն իրականացվում է բացառապես ՀՀ ԱԻՆ «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ մասնագիտացված կառույցի կողմից:

Ըստ Ընկերության՝ անհրաժեշտ է հարցում ուղարկել լիազոր մարմնին, պարզելու համար այդ հակակարտային կայանների ենթադրյալ գոյության վերաբերյալ և դրանց համապատասխանությունն օրենքի պահանջին:

Ընկերությունը հայտնել է, որ բողքը հիմնավոր է և գտնում է, որ այն ենթակա է բավարարման:

Ընկերությունը բողոքով Խորհրդին խնդրել է.

1. Կիրառել ժամանակավոր միջոց՝ կասեցնել «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. որոշմամբ հաստատված պայմանագրի կնքումը (որոշման կատարումը) մինչև սույն բողոքի վերաբերյալ վերջնական որոշման կայացումը, որը ԳԲԽ-91/16 բողոքը քննող հանձնաժողովի 06.09.2016թ. միջանկյալ որոշմամբ բավարարվել է:

2. Դադարեցնել /չեղյալ համարել/ «ՀՀԱՄ-ԲԸԱՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով բանակցային ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.08.2016թ. «Լոկատոր» ՓԲԸ-ին հաղթող ճանաչելու թիվ 3 որոշումը և «Բարվա» ՍՊԸ-ին ճանաչել նույն ծածկագրով ընթացակարգի հաղթող:

3. «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով մրցույթի արդյունքում պայմանագիր կնքված լինելու դեպքում ընթացակարգը ճանաչել ապօրինի և Պատվիրատուին պարտավորեցնել լուծել պայմանագիրը:

2. <u>«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.</u>

«Լոկատոր» ՓԲԸ-ն Կենտրոնին ուղղված 01.09.2016թ. գրությամբ խնդրել է «Լոկատոր» ՓԲԸ-ին ներգրավվել որպես երրորդ կողմ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 24.08.2016թ. ներկայացված բողոքի քննության ընթացքում:

«Լոկատոր» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 06.09.2016թ. ներկայացրել է դիրքորոշում «Բարվա» ՍՊԸ-ի վերաբերյալ, որով հայտնել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն ամբողջությամբ առարկում է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքի դեմ: Կազմակերպությունը գտնում է, որ բողոքն անհիմն է, հիմնված է զուտ ենթադրությունների վրա և ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

«Լոկատոր» ՓԲԸ-ն անդրադարձել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ենթադրություններին առանձին-առանձին:

1. «Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքում բերված ենթադրությունների հիմքում որպես փաստ նշվել է, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար 16.11.2015թ. հայտարարված մրցույթի հրավերով «Լոկատոր» ՓԲԸ-ն մասնագիտական

փորձառություն չափանիշի բավարարման համար ներկայացրել է «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի հետ կնքված պայմանագիր, որտեղ բացակայել է հակակարկտային կայանների տեղակայման մասին որևէ նշում և արդեն նույն մարզպետարանի 16.08.2016թ. թիվ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով հայտարարված մրցույթում ներկայացրել է նույն ամսաթվով և համարով պայմանագիր, որտեղ ավելացված է «տեղակայում» բառը: Ինչպես նաև նշվել է, որ Կազմակերպության կողմից բողոքարկվել է 16.11.2015թ. հայտարարված մրցույթը, քանի որ հանձնաժողովը չպետք է պահանջներ տեղակայման վերաբերյալ որևէ փաստաթուղթ:

Այն, որ «Լոկատոր» ՓԲԸ 16.11.2015թ. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված հակակարկտային կայանների ձեռք բերման հրավերի շրջանակներում ներկայացրել է «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի հետ կնքված հակակարկտային կայանների 02.10.2015թ. կնքված առք ու վաճառքի թիվ Ա15-012 պայմանագիրը, որում բացակայել է որևէ նշում կայանների տեղակայման մասին, դա փաստ է, և դա ընդունվում «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից:

ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից 16.11.2015թ. հայտարարված մրցույթում, ինչպես նաև դրանից առաջ Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայանների ձեռք բերման հրավերներում, առհասարակ, բացակայել է մասնագիտական փորձառության չափանիշի պահանջ, համաձայն որի մասնակիցները պետք է ներկայացնեն կայանների տեղակայման մասին առուվաճառքի պայմանագիր՝ որպես համանման պայմանագրի կատարման փորձ: Մինչև «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Հայաստանի Հանրապետությունում հակակարկտային կայանների ձեռք բերման հրավերներին մասնակցելը, բոլոր հրավերներով և հրավերներին կից պայմանագրերով նշվել է, որ մասնագիտական փորձառություն չափանիշին բավարարելու համար որպես համանման պայմանագրի կատրաման փորձ, մասնակիցները պետք է ներկայացնեն հակակարկտային կայանների միայն մատակարարման համանման պայմանագրեր, և պետք է կնքվի հակակարկտային կայանների մատակարարման պայմանագիր՝ առանց տեղակայման:

16.11.2015թ. Արարատի մարզպետարանի կողմից հայտարարված մրցույթին մասնակցելով՝ Կազմակերպությունը ներկայացրել է համանման ապրանքի

մատակարման պայմանագիր՝ առանց տեղակայման, քանի որ հրավերով չի պահանջվել, որ մասնագիտական փորձառություն չափանիշին բավարարելու համար մասնակիցը պետք է ներկայացնի հակակարտային կայանների ձեռք բերման և տեղակաման պայմանագրեր: Այդ հիմքով մերժվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը: «Լոկատոր» ՓԲԸ-ն բողոքարկել է հանձնաժողովի որոշումը՝ այն պատճառաբանությամբ, որ հարվերով չի պահանջվել, որ մասնագիտական փորձառություն չափանիշին բավարարելու համար պետք է ներկայացվի հակակարկտային կայանների ձեռք բերման և տեղակայման համանման պայմանագրեր: Գնումների բողոքարկման խորհուրդը մերժել է Ընկերության բողոքը: Այնուհետև Կազմակերպությունը դիմել է ՀՀ Արարատի և Վայոց Ձորի մարզերի ընդհանուր իրավասության դատարան այն հիմքով, որ հրավերով չի պահանջվել հակակարկտային կայանների տեղակայման փորձ, և որ Կազմակերպության հայտն այդ հիմքով մերժելն անհիմն է, չի բխում օրենքի և հրավերի պահանջներից:

Այդ դատական գործը մինչ օրս քննվում է դատարանի կողմից, և «Լոկատոր» ՓԲԸ-ն մնում է այն նույն կարծիքին, որ ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից 16.11.2015թ. հայտարարված մրցույթի հրավերով չի պահանջվել հակակարտային կայանների մատակարարման փորձ, և որ հանձաժողովը այդ հիմքով սխալ է մերժել «Լոկատոր» ՓԲԸ-ի հայտը:

«Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն, գնելով 3 հատ հակակարկտային կայան, խնդրել է, որ Կազմակերպության կողմից նաև տեղադրվի այդ կայաններն իր կողմից նշված վայրերում և միաժամանակ, քանի որ պայմանգրում տեղակայման մասին խոսք չկար, խնդրել է պայմանագրում ավելացնել «տեղակայում» բառը, որպեսզի պայմանագիրը համապատասխանի փաստացի կատարված աշխատանքին: «Լոկատոր» ՓԲԸ-ն, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ իր կողմից «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ին վաճառված հակակարկտային կայանները փաստացի տեղադրվել են, սակայն պայմանագրում բացակայում է դրա մասին նշում, «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի հետ փոխադարձ համաձայնությամբ վերաշարադրել են պայմանագրի համապատասխան դրույթները և ավելացրել «տեղակայում» բառը: Կողմերի միջև կնքվել է նաև համապատասխան համաձայնագիր, որի հիման վրա վերաշարադրվել է 02.10.2015թ. կնքված առք ու վաճառքի թիվ Ա15-012 պայմանագիրը: Իսկ այդ համաձայնագիրը չի

ներկայացվել որևէ մրցույթի այն պարզ պատճառով, որ դրա անհրաժեշտությունը չի եղել:

Հարկ է նշել, որ Կազմակերպությունը և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն պայմանագիրը կնքել են՝ հիմք ընդունելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 3-րդ հոդվածի 2-րդ մասի և 437-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի պահանջները, համաձայն որոնց «Քաղաքացիները և իրավաբանական անձիք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման»:

«Քաղաքացիները և իրավաբանական անձիք ազատ են պայմանագիր կնքելիս:

...Կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր...»:

Համաձայն այդ իրավադրույթների՝ կողմերը կարող են կնքել ցանկացած տեսակի պայմանագիր կամ պայմանագրում ավելացնել և հանել ցանկացած դրույթ առանց լրացուցիչ համաձայնագիր կքնելու, քանի որ առկա է եղել կողմերի կամահայտնությունը, և կողմերն եկել են համաձայնության, որ լրացուցիչ համաձայնագրից բացի նույն պայմանագիրը պետք է վերաշարադրել և նրանում ավելացնել «տեղակայում» բառը, որը չի հակասում ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, այնպես էլ այլ օրենքներին: Ավելին, կողմերը կարող են ունենալ նույն առարկային վերաբերող տարբեր պայմանագրեր, որը նույնպես չի հակասում ինչպես ՀՀ քաղաքացիական օրենսգրքին, այնպես էլ այլ օրենքներին:

Բողոքում «Բարվա» ՍՊԸ-ի կողմից չի ներկայացվել որևէ օրենքի կամ օրենսգրքի նորմ, համաձայն որի «Լոկատոր» ՓԲԸ-ն իրավունք չուներ պայմանագրում նման բառ ավելացնել, այլ նշվել է, որ իբր այդ ընկերությունները պատկանում են նույն անձին և կարող են կատարել պայմանագրում ցանկացած փոփոխություն, ինչը, ըստ «Լոկատոր» ՓԲԸ-ի, միայն ենթադրություն է և չի համապատասխանում իրականությանը, ավելին, դրանք որևէ կապ չունեն ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից թիվ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով մրցույթի հետ, որի հաղթող է ճանաչվել «Լոկատոր» ՓԲԸ-ն:

2. Բողոքում «Բարվա» ՍՊԸ-ն նշել է, թե իր համար անհասկանալի է, թե մայրաքաղաքի վարչական տարածքում շինարարական գործունեություն ծավալող «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն ինչի համար է գնել 3 հատ հակակարկտային կայան, որտեղ, ինչի համար և ինչպես է տեղադրել այդ ձեռք բերված հակակարկտային կայանները, քանի որ կայաններն իրենցից ներկայացնում են բավականին աղմկոտ և որոշակի շահագործման կանոններ պահանջող սարքավորումներ, և որոնցից յուրաքանչյուրը պաշտպանում է կարկտից առնվազն 80 հա կամ 500մ շառավղով տարածք, և նրանք պետք է տեղակայվեն միմյանցից առնվազն 1կմ հեռավորությամբ: Ինչպես նաև բողոքում նշել է, որ այդ հակակարկտային կայանները «Տեխնիկական անվտանգության մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետք է ենթարկվեն տեխնիկական անվտանգության փորձաքննության, և վերջիններս պետք է շահագործվեն ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայություն» ՊՈԱԿ մասնագիտացված կառույցի կողմից:

«Լոկատոր» ՓԲԸ-ն նշել է, որ այդ հակակարկտային կայանները իրականում տեղադրվել են «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի կողմից նշված հասցեներում: Այն, թե ինչ նպատակով, որտեղ, ըստ «Լոկատոր» ՓԲԸ-ի, դա ոչ մեկին, առավել ևս «Բարվա» ՍՊԸ-ին չի վերաբերում, և «Բարվա» ՍՊԸ-ն առանց որևէ հիմնավոր ապացույցի, հիմնվելով զուտ ենթադրությունների վրա, բողոքում բարձրացրել է այնպիսի հարցեր, որոնք իրականությանը չեն համապատասխանում:

Այն, որ այդ հակակարկտային կայանները պետք է անցնեն տեխնիկական անվտանգության փորձաքննություն, ըստ «Լոկատոր» ՓԲԸ-ի, ևս որևէ կապ չունի այդ հակակարտային կայանների տեղադրման հետ, և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն կարող է և չիրականացնել տեխնիկական անվտանգության փորձաքննություն՝ դրա հետ կապված ռիսկը վերցնելով իր վրա: Եվ ի վերջո, «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի խնդիրն է, թե այդ հակակարկտային կայանները կանցնեն տեխիկական անվտանգության փորձաքննություն կամ դրանց շահագործումը կհանձնվի համապատասխան մասնագիտական կառույցին, թե ոչ, և դրա համար պատասխանատու է «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն և ոչ թե «Լոկատոր» ՓԲԸ-ն:

«Լոկատոր» ՓԲԸ-ն հայնել է, որ Արարատի մարզպետարանի կողմից հայատարարված թիվ «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով Ընթացակարգի և «Բարվա» ՍՊԸ-ի կողմից բողոքում նշված փաստերն որևէ կապ չունեն իրար հետ: Այսպես ասած, «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքից կարելի է եզրակացնել, որ խոսք է գնում այն մասին, թե իբր «Լոկատոր» ՓԲԸ-ն չի տեղադրել այդ հակակարկտային կայանները և «Լոկատոր» ՓԲԸ-ն փաստորեն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր, ապա Կազմակերպությունը նշել է, որ, նախ, որևէ կերպ «Բարվա» ՍՊԸ-ի կողմից չեն ապացուցվում այդ հանգամանքները, դրանք, ինչպես նշվեց վերևում, չեն համապատասխանում իրականությանը ու դրանք զուտ ենթադրություններ են, և չեն կարող հիմք հանդիսանալ վերջինիս բողոքը բավարարելու համար:

Կազմակերպությունը ևս մեկ անգամ պնդել է, որ «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև կնքված հակակարկտային կայանների առուվաճառքի պայմանագրի համաձայն՝ «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ին վաճառված հակակարկտային կայանները վաճառվել և տեղադրվել են վերջինիս կողմից մատնանշված հասցեներում:

Ուստի, հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով ՀՀ գնումները կարգավորող օրենսդրության պահանջները և սկզբունքները՝ «Լոկատոր» ՓԲԸ-ն խնդրել է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված բողոքն ամբողջությամբ մերժել՝ այն անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Կազմակերպության կողմից գրությանը կից ներկայացրել է «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև կնքված համաձայնագրի պատճենը:

3. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ Արարատի մարզպետարանը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 29.08.2016թ. թիվ 2/3/1-2/4734-16 գրությամբ ներկայացրել է Ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն վերոհիշյալ գրությամբ «Բարվա» ՍՊԸ-ի 24.08.2016թ. ներկայացրած բողոքի վերաբերյալ հայտնել է, որ հաղթող մասնկից «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հավաստող փաստաթղթերը համապատասխանում են Ընթացակարգի հրավերի պահանջներին:

Ինչ վերաբերում է բողոքում ներկայացված այլ փաստարկներին և մեղադրանքներին, ապա դրանք, ըստ Պատվիրատուի, դուրս են գնահատող հանձնաժողովի գործառույթներից և հանձնաժողովը Ընթացակարգը կազմակերպել և հայտերը գնահատել է գնումների մասին ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

4. ԳԲԽ-91/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-91/16 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 2-րդ կետի 2.3 ենթակետի 1-ին ենթակետի համաձայն՝ մասնակիցը պետք է ունենա կնքվելիք պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող՝ մասնագիտական փորձառություն:

3. Ընթացակարգի հրավերով սահմանվել է, որ Մասնակցի՝ ***«Մասնագիտական փորձառություն»*** չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) Մասնակիցը հայտով ներկայացնում է ***հայտարարություն (Հավելված 3.1),*** որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է ***համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր:*** Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում

մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից: ***Նմանատիպ են համարվում*** սույն հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս N 1 հավելված հանդիսացող ***հակակարկտային կայանների*** ձեռքբերում ***տեղակայումով*** մատակարարումը:

2) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որպես սույն պարբերության 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշի հիմնավորող փաստաթուղթ ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը:

4. ՀՀ Արարատի մարզպետարանի կողմից ՀՀ Արարատի մարզպետարանի կարիքների համար հակակարկտային կայանի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով գնումների հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգին հայտ են ներկայացրել «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Բարվա» ՍՊԸ-ն:

5. «Լոկատոր» ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 3.1 հավելվածով՝ մասնագիտական փորձառության մասին հայտարարությամբ, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է հակակարկտային կայանների մատակարարում տեղակայումով, որի ընդհանուր արժեքը կազմել է 17 260 000 ՀՀ դրամ և պարտավորվում է նշված ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

7. Նույն արձանագրությամբ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ծանուցել է «Լոկատոր» ՓԲԸ-ին՝ առաջարկելով երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

8. «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից, որպես նախատեսված մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը հիմնավորող փաստաթուղթ, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միչև 02.10.2015թ. կնքված թիվ Ա15-012 ապրանքի առուվաճառքի պայմանագիրը և պայմանագրին կից՝ Կողմերի կողմից կնքված Պայմանագրի առարկա հանդիսացող հակակարկային կայանի՝ Վաճառողի կողմից Գնորդին հանձնելու և Գնորդի կողմից այն ընդունելու մասին 12.11.2015թ. հանձնման-ընդունման ակտը և Վաճառողի կողմից Պայմանագրում մատնանշված հասցեում հակակարկտային կայանների տեղակայման վերաբերյալ 12.11.2015թ. ակտը:

9. Ընթացակարգի գնահատող հանձաժողովի 19.08.2016թ. ժամը 12:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 2-րդ կետով որոշել է «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից գնահատող հանձնաժողովին էլեկտրոնային եղանակով ներկայացված հրավերով պահանջվող որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը գնահատել բավարար և նույն արձանագրության 3-րդ կետով մասնակցին ճանաչել ընտրված մասնակից:

10. «ՀՀԱՄ-ԲԸՀԱՊՁԲ-16/02» ծածկագրով ընթացակարգի արդյունքներով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը www.gnumner.am համացանցային կայքում հրապարարակվել է 19.08.2016թ.՝ սահմանելով անգործության ժամկետ նշված հայտարարությունը հրապարակելու օրվան հաջորդող օրվանից 5-րդ աշխատանքային օրը ներառյալ:

11. «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ԳԲԽ-91/16 բողոքը քննող հանձնաժողովին ներկայացվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միչև 02.10.2015թ. կնքված թիվ Ա15-012 ապրանքի առուվաճառքի պայմանագրում (այսուհետ նաև՝ Պայմանագիր) փոփոխություն կատարելու մասին 26.11.2016թ. կնքված համաձայնագիրը, որով կողմերը պայմանավորվեցին Պայմանագրի համապատասխան կետերում ավելացնել «տեղակայում» բառը:

5. ԳԲԽ-91/16 բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով «Բարվա» ՍՊԸ-ի 24.08.2016թ. բողոքը, ՀՀ Արարատի մարզպետարանի 29.08.2016թ. թիվ 2/3/1-2/4734-16 գրությունը և կից փաստաթղթերը, հայտնում է հետևյալը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

Օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների՝ առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում:

Օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին պարբերության համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք ազատ են պայմանագիր կնքելիս:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ կողմերը կարող են կնքել ինչպես օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված, այնպես էլ չնախատեսված պայմանագիր:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենսգրքի 468-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագրի փոփոխման կամ լուծման համաձայնությունը կնքվում է այն ձևով, ինչով պայմանագիրը, եթե այլ բան չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պայմանագրից կամ գործարար շրջանառության սովորույթներից:

Օրենսգրքի 303-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործարքն անվավեր է սույն օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով (վիճահարույց գործարք) կամ անկախ նման ճանաչումից (առոչինչ գործարք):

Օրենքի 31-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

«Գնումների մասին» ՀՀ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող մասնագիտական փորձառություն:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 65-րդ կետի 1-ին, 3-րդ և 4-րդ ենթակետերի համաձայն՝ մասնակիցների, Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով նախատեսված՝ «Մասնագիտական փորձառություն» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է հայտարարություն, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարվա ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է համանման (նմանատիպ) առնվազն մեկ պայմանագիր: Նախկինում կատարված պայմանագիրը (կամ պայմանագրերը) գնահատվում է (կամ գնահատվում են) նմանատիպ, եթե դրա (դրանց) շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված

աշխատանքների ծավալը (կամ հանրագումարային ծավալը)՝ գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի հիսուն տոկոսից, որից առնվազն մեկ պայմանագրի շրջանակներում մատակարարված ապրանքների, մատուցված ծառայությունների և կատարված աշխատանքների ծավալը գումարային արտահայտությամբ, պակաս չէ տվյալ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակցի ներկայացրած գնային առաջարկի քսան տոկոսից:

3) ***առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը՝ որպես սույն կետի 1-ին ենթակետով սահմանված որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը.***

4) մասնակցի որակավորումը գնահատվում է բավարար, եթե վերջինս ապահովում է սույն կետով նախատեսված պահանջները:

Այսպիսով, «Լոկատոր» ՓԲԸ-ն Ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 3.1 հավելվածով հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելու տարվա և դրան նախորդող երեք տարիների ընթացքում պատշաճ ձևով իրականացրել է հակակարկտային կայանների մատակարարում տեղակայումով, որի ընդհանուր արժեքը կազմել է 17 260 000 ՀՀ դրամ և պարտավորվում է նշված ծածկագրով բանակցային ընթացակարգի հրավերով սահմանված կարգով ներկայացնել սույն հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.08.2016թ. ժամը 16:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ «Լոկատոր» ՓԲԸ-ն ճանաչվել է 1-ին չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցրած մասնակից և «Լոկատոր» ՓԲԸ-ից պահանջվել է ներկայացնել հրավերով նախատեսված որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Ընդ որում հրավերով, որպես համանման (նմանատիպ) պայմանագիր է սահմանվել հրավերի N 6 հավելվածով ներկայացված պայմանագրի անբաժանելի մաս

N 1 հավելված հանդիսացող ***հակակարկտային կայանների տեղակայումով*** մատակարարման պայմանագիրը:

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից որպես հայտի թիվ 3.1 հավելվածով նախատեսված մասնագիտական փորձառության մասին հայտարարությունը հիմնավորող փաստաթուղթ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին ներկայացվել է «Լոկատոր» ՓԲԸ-ի և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ի միջև 02.10.2015թ. կնքված թիվ Ա15-012 ապրանքի առուվաճառքի պայմանագիրը, որի 1-ին կետի 1.2 կետի համաձայն «1.2. Սույն պայմանագրին համապատասխան՝ ապրանք է համարվում թվով 3 հակակարկտային կայանների մատակարարումը և տեղակայումը»:

Պայմանագրի 1.3.1. կետի համաձայն՝ ապրանքը մատակարարված և տեղակայված է համարվում Գնորդի կամ նրա լիազոր ներկայացուցչի կողմից հանձնման –ընդունման ակտի ստորագրման պահից:

«Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Պայմանագրին կից ներկայացվել է Կողմերի կողմից կնքված Պայմանագրի առարկա հանդիսացող հակակարկային կայանի՝ Վաճառողի կողմից Գնորդին հանձնելու և Գնորդի կողմից այն ընդունելու մասին 12.11.2015թ. հանձնման-ընդունման ակտը և Վաճառողի կողմից Պայմանագրում մատնանշված հասցեում հակակարկտային կայանների տեղակայման վերաբերյալ 12.11.2015թ. ակտը:

Այսպիսով, Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետը սահմանում է, որ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը որպես «Մասնագիտական փորձառություն» որակավորման չափանիշը հիմնավորող փաստաթուղթ, ներկայացնում է նախկինում կատարած պայմանագրի պատճենը, իսկ դրա պատշաճ կատարումը գնահատելու համար՝ տվյալ պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենը կամ տվյալ պայմանագրի կատարումն ընդունած կողմի գրավոր հավաստումը, որպիսի փաստաթղթերը «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից, Կարգի 65-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն, փաստացի ներկայացվել են Ընթացակարգի գնահատող հանձնաժողովին:

Հետևաբար, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից ներկայացված, հրավերով նախատեսված որակավորման փաստաթղթերը

գնահատելով բավարար, գործել է իրավաչափ, քանի որ Կազմակերպության կողմից գնահատող հանձնաժողովին ներկայացված Պայմանագիրը և տվյալ Պայմանագրի կողմերի հաստատած՝ պայմանագրի սահմանված ժամկետում կատարումը հավաստող ակտերի (հանձնման-ընդունման արձանագրություն և այլն) պատճենները ներկայացվել են Կարգի 65-րդ կետով և Ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

Ինչ վերաբերում է Ընկերության այն պնդմանը, որ Պայմանագրի մեջ նախկինում բացակայել է հակակարկտային կայանների տեղակայման վերաբերյալ պայմանը, ապա նշենք, որ «Լոկատոր» ՓԲԸ-ի կողմից Խորհրդին ներկայացվել է Պայմանագրում փոփոխություն կատարելու մասին 26.11.2016թ. կնքված համաձայնագիրը, որով կողմերը պայմանավորվել էին Պայմանագրի համապատասխան կետերում ավելացնել «տեղակայում» բառը:

Հաշվի առնելով այն, որ Օրենսգրքի 466-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ պայմանագրի փոփոխումը և լուծումը հնարավոր է կողմերի համաձայնությամբ, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով, ուստի «Լոկատոր» ՓԲԸ-ն և «Երազ Սպասարկում» ՍՊԸ-ն Պայմանագրում կատարել են համապատասխան փոփոխություն, որը Օրենսգրքի 468-րդ հոդվածի պահանջներին համապատասխան կնքվել է այն ձևով, ինչով Պայմանագիրը:

Ելնելով վերոգրյալից, գտնում ենք, որ «Բարվա» ՍՊԸ-ի բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Ուստի Կենտրոնը Խորհրդին առաջարկում է «Բարվա» ՍՊԸ-ի կողմից 24.08.2016թ. ներկայացված բողոքը մերժել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական
խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ԳԲԽ-91/16 բողոքը

քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ա. Ծատուրյան